

միշտ էլ սահմանուում են այնպէս, որ աչքի առաջ են ունենում պաշտօնեաների առաձգական խղճմտանքը: Այն մարդիկ, որոնք այս ձեւի պետական խղճմտանքի տէր են, վարում են ըստ ամենայնի հաճելի կեանք ու յաճախ աւելի են ծախսում անգամ իրենց ծառաների համար, քան որ ռոճիկ են ստանում. մինչ ուրիշները, որոնք երկիւղից եւ կամ պատուասիրութիւնից չեն ուղղում յարմարուել պայմաններին, բնաւ տանելի կեանք չունին:

«Այս վերջին դասակարգին էր պատկանում եւ Արովեան: Նա չափէն աւելի ազնիւ մարդ էր՝ քայլելու համար հարստանալու ռուսական սովորական ճամբէն: Միւս կողմից՝ նրա բոլոր փորձերը, արժէքաւորելու իր գիտական մեծաքիւ աշխատութիւնները, հանդիպեցին անյաջողութեանց: Այսպէս օրինակ, մեծ ջանասիրութեամբ եւ ժամանակ դործադրելով նա կադմէլ էր ժողովրդի բերնում կենդանի, արդի հայերէնի փերականութիւնը եւ մի քառարան, ուղարկել էր Պետերբուրգ այն յոյսով, թէ Գիտութեանց ձեւաբանը իր հաշուին տպագրել կը տայ այդ աշխատութիւնը եւ մի չափաւոր նպաստով կը քաջալերէ նրան՝ յաջորդ աշխատանքներին համար:

«Եւ սակայն նրա սպասելիքները չարդարացան: Ճեմարանը (գիտութեանց) աշխատութիւնը յղեց իր՝ մասնագէտ համարուած անդամին, պարոն կրտսեր Բրոսէին, իսկ պարոն Բրոսէն էլ իր մի ընդարձակ գեկոյցի մէջ պարզեց, թէ աշխատութիւնը թէեւ հարուստ նիւթեր է պարունակում, բայց նրան պակասում են գիտական հիմքեր եւ բաժանումները:

«Որչափ եւ տարօրինակ հնչելու լինի նման մի դատողութիւն մանաւանդ պարոն Բրոսէի բերնում, որի վրացերէնի քերականութիւնը ոչ հարուստ նիւթ է պարունակում, ոչ էլ գիտական հիմքեր եւ դասակարգութեան ուեէ հետք, բայց եւ այնպէս Արովեանի համար նա ունեցաւ ամենացաւալի հետեւանքները: Գրչի մի հարուածով ոչնչացուած էին բոլոր այն յոյսերը, որ նա կապել էր իր՝ երկար տարիների ու ջանքերի արդիւնք աշխատութեանը: Միաժամանակ նա զրկւում էր հնարաւորութիւնից՝ լրացնելու իր մնացած աշխատութիւնները: Յետագային տեղի ունեցած ազդեցիկ միջնորդութիւնները մասնագէտ, իրազեկ

մարդկանց կողմից, մնացին անհետեւանք՝ ֆաղափախ պատճառներով:

«Այսինքն՝ Արովեանի մտադրութիւնն էր, նրա բոլոր աշխատութիւններն էլ այդ նպատակին են ձգտում, եիմենլ հայկական նոր գրականութիւնը եւ այդ ձեւով իր հայրենակիցների յառաջադիմութեան համար ստեղծել ազգային յեմարան: Ես առաջ արդէն ասել եմ, որ հին հայերէնը վաղուց ի վեր մեռած, գիտունների լեզու է դարձած, որի դրական հարուստ գանձերը բուն իսկ երկրում սակաւաթիւ ընտրեալներին միայն մատչելի են: Արովեան կամենում էր լաւագոյնները այդ գանձերից աշխարհաբար հայերէն քարգմանել, պահպանելով հին նշանադրերը: Դա համարում էր նա որպէս ամենէն աւելի ապահով ու յարմար միջոց՝ իր հայրենակիցների մէջ կրթութիւն տարածելու եւ նրանցում գիտական միտք դարթեցնելու գործում: Զէ՞ որ, առաջ, անգամ աւելի ուսեալները ժողովրդեան մէջ՝ հարկադրուած էին եղել Ս. Գիրքը հայերէն տառեր հագած տաճկերէն թարգմանութեամբ կարդալ, մինչեւ որ այդ չարքը մասամբ վերացաւ Դիտրիխի՝ Ս. Գիրքը աշխարհաբար հայերէն թարգմանութեան փորձով:

«Արովեան ի վիճակի պիտի լինէր իր ամենաընդունակ աշակերտների օգնութեամբ եւ դրաբարից ու եւրոպական լեզուներից թարգմանութիւններ կատարելով մի քանի տարիներ ընթացքում ժողովրդի առօրեայ պահանջները գոհացնող բաւարար գրականութիւն ի կեանս կոչել, եթէ նրա ծրագիրները Պետերբուրգից դիտաւորեալ կերպով անյաջողութեամբ չմատնուէին:

«Ռուս կառավարութիւնը ձգտում է ցոյց տալիս՝ ձեռք բերելու գիտութեանց եւ արուեստից պաշտպանի հոգակ: Նա սիրով է մըսելում ամենամեծ գումարներ՝ ամենաանշան մարդոց համար, միայն թէ սրանք ներկայացրեն լաւ յանձնարարականներ: Նա սիրում է տեսնել եւ գնահատել՝ բարձր աստիճաններ ու շքանշաններ տալով մարդկանց, երբ սրանք Պետերբուրգում դաւմուխերէնի եւ կամ կիրգիզերէնի քերականութիւն են գրում Փրանսացիների համար: Նա ոչինչ չունի այն բանի դէմ, որ պեղեն պոնտական արքաների դամբարանները ու յայտնաբերած արձաններն էլ թանգա-